ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ԶՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 Ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 1. ՄԱՅԻՍ. Nr 1. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ „ԱՊՏԱԿ"-Ի ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՌԹԻՒ.

Ներկայ համարով „Ապտակ"-ը կը թեւակոխէ իր հրատարակութեան երրորդ տարեշրջանը: Այս նոր տարեշրջանին մէջ „Ապտակ"-ը պիտի շարունակուի նոյն ուղղութեամբ և նոյն ծաւալով:

„Ապտակ"-ի գտած ընդունելութիւնը հայ հասարակութեան մէջ բաւական ապացոյց մ'է թէ, իր երկամեայ շրջանին մէջ, արդէն ժողովրդի սրտին ու հոգիին խօսող օրգաններէն մին դարձած է այն և կը կատարէ մի յայտնի դեր հայ յեղափոխական կեանքի վերաբերութեամբ, ղեկավարուելով այն ուղղութեամբ, գործածելով այն ոճը որ պէտք էր իրեն թելադրէր ժողովրդի շահուց տեսակէտը, ժողովրդային կեանքի ու տրամադրութիւններու գիտութիւնը:

Արդարև, այն մարմինը, այն մամուլը՝ որ ձեռք կառնէ ժողովրդի մը շահերուն գործնական պաշտպանութիւնը, նորա քաղաքական կեանքի ղեկավարութիւնը, պէտք է ունենայ խորին հմտութիւն ոչ միայն նորա հասարակական կեանքի պայմաններուն ու պահանջքներուն; այլ և միևնոյն ժամանակ պէտք է գիտնայ ժողովրդային խաւերու վրայ ներշնչող, տպաւորութիւն ու ազդեցութիւն գործող կերպերն ու եղանակները, ժողովուրդը լուսաւորելու ու հրահանգելու, ոգևորելու և խրախուսելու, ի հարկին ելեկտրականացնելու գործնական միջոցները, միով բանիւ՝ պէտք է ճանաչէ ժողովուրդի հոգին:

Ընչակեան կուսակցութիւնը, իր մամուլով, որպէս և իր գործունէութեամբ, ջնացած է միշտ լրացնել այս պայմանները. և ասկէ առաջ եկած է կուսակցութեան և իր հրատարակութիւններու վայելած ժողովրդականութիւնը հայ հասարակութեան մէջ:

„Ապտակ"-ը Հնչակեան կուսակցութեան երգիծաբանական օրգանն է:

Երգիծանքը, պատշաճօրէն ի գործ դրուած, այն ամենագլխաւոր զէնքն է, զոր ամէն երկրի մէջ գործածած են ու կը գործածեն յեղափոխական տարրերը, իրենց ներքին և արտաքին թշնամիներուն դէմ: Երգիծանքը՝ ամենալաւ միջոցն է ժողովրդին ճանչցնելու և ատելի դարձընելու իր թշնամիները, վար առնելով այն բարեկամական, ազգասիրական կամ մարդասիրական դիմակը, որով շատ անգամ այս վերջինները կը ծպտին, մերկացնելով անոնց թաքուն գործերը և վնասակար դիտումները, ապտակելով ու խայտառակելով զանոնք: Վատերու և կեղծաւորներու ապտակուելով ու խայտառակուելովը, շատ անգամ կը մտրակուին ու կը քաջալերուին լաքեալները, թոյլերն ու թերահաւատները. այս կերպով երգիծանքը կը դառնայ միանգամայն մի խրախուսիչ զէնք, խեթան ժողովրդի համար: Ժողովուրդը, որ գիտական և իմաստասիրական լուրջ ու վերացական գրուածներէ այնքան բան չհասկնար և երբեմն ձանձրոյթով կը կարդայ զանոնք, ընդհակառակը, միշտ մեծ հաճոյքով կը կարդայ երգիծաբանական գրուածքները, որոնք իր ծաղրը, զայրոյթը, արհամարհանքի զգացումը, երբեմն նաև ծիծաղը՝ շարժելու ձևին տակ, զինք կը հրահանգեն, իրեն կաւանդեն առողջ միտքեր և առողջ գաղափարներ և կը վարժեցնեն զինք լինել խիստ, անողոք, անխարդախ, անկեղծ և անաչառ — նկարագիր՝ որ պէտք է ունենայ յեղափոխական ժողովուրդ մը:

Այսպէս յեղափոխական թէ լուրջ տեսութիւններու — օրինակ՝ „Հնչակ"-ի և „Գաղափար"-ի — և թէ երգիծաբանական գրուածքներու „ինչպէս՝ „Ապտակ"-ի" ոգին ու նպատակը լինելով միևնոյնը — ընտելացնել ժամանակիս ամենայառաջադէմ գաղափարները ժողովրդին, և արթնցնել, զարգացնել նորա գիտակցութիւնը իր վիճակի և իր շահերուն վրայ, ճանչցնելով իրեն իր իսկական բարեկամներն ու թշնամիները — իրենց գործածած ոճը և լեզուն միայն կը տարբերին իրարմէ. մին միւսին լրացուցիչն է: —

„Ապտակ"-ի ներկայ տարեշրջանի համարները պիտի ունենան, ըստ առաջնոյն, քաղաքական կացութիւնը պատկերացնող նկարներ, նաև ոտանաւորներ, հանելուկներ ու բեպուսներ:



ՍՈՒԼԹԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ.

Վերջին ամիսներու մէջ, ինչպէս յայտնի է, յուզուեցաւ Եգիպտոսի խնդիրը: Սուլթանը, իրեն նեցուկ ունենալով Ֆրանսան ու Ռուսիան (վասնզի առանց նեցուկի չկրնար քալել այլևս), նոր քայլ մ'ալ կառնէր Անգլիոյ դէմ. անկէ կը պահանջէր որ Եգիպտոսէն ելնէ: Անգլիա, ի պատասխանի, Ափրիկէի անապատներու Տէրվիշներուն դէմ անկլօ-եգիպտական արշաւանքն սկսաւ և այդ պատրուակով աւելի կեդրոնացուց իր ոյժերը Նեղոսի ափանց վրայ. շատ մը զօրքեր ալ բերաւ Հնդկաստանէն, այնպէս որ սուլթանը սկսաւ կասկածիլ թէ, Անգլիա գուցէ միտք ունենայ Արաբիան ալ գրաւելու և այդպիսով զինք իր խալիֆայական տիտղոսէն զրկելու... Սակայն Անգլիոյ աւանդական քաղաքականութիւնն է որ, երբ մի կողմէ կը հարուածէ, միւս կողմէ կը շոյէ—որպէս զի յետոյ կարենայ կրկին հարուածել: Ճօն Պուլն ուրեմն, իր այս աղուեսական խորամանկութեամբ, ուզեց սուլթանին փոքրիկ վիջում մ'ընել, մանաւանդ որ այդ անբժշկելի Հիւանդին կաթուածահար մեռնիլը հակառակ էր իր շահերուն: Մէկ կողմէ այդ սպառնական միջոցները գործադրելով, միւս կողմէ խոնարհաբար յայտարարեց սուլթանին՝ թէ կը ճանաչէ իր վեհապետական գերիշխանութիւնը Եգիպտոսի մէջ, և անոր աւելի հաւաստիք մ'ընծայելու համար իր անկեղծութեան, յանձն առաւ ողջակէզ մ'ալ ընել սուլթանի բռնապետութեան խորանին առջև: Բայց որովհետև միևնոյն ժամանակ—մոռնալը ապերախտութիւն կը լինէր, —Անգլիա Հայերու պաշտպանն է, իսկ ինքը սուլթանը՝ Հայերու երդուեալ թշնամին, նա ուզեց որ, սուլթանին անձնասիրութիւնը փայփայելու համար լինելիք զոհը ընտրուի Հայերէն... և մշեցի Մուշեղ Գաբրիէլեանը, որ ազգային և անհատական վրէժխնդրութեամբ ճիւաղ թուրք զինուոր մը սպանած էր, ի հաճոյս սուլթանի՝ կախաղան հանուեցաւ Եգիպտոսի մէջ:

Հիմա անշուշտ երկու կողմն ալ գոհ են: Սուլթանի կամքով Եգիպտոսի մէջ Հայու մը կախաղանի վրայ ձօճիլը նշան մ'է թէ սուլթանական վայրագ ազդեցութիւնը, գէթ բարոյապէս, կը տիրապետէ դեռ Փարաւոնների երկրին մէջ: Անգլիա ալ, որ աւելի գործին նիւթական կողմը կը դիտէ, առաւել ևս գոհ եղած պէտք է ըլլայ. վասն զի Եգիպտոսի կախաղանով և, անկէ առաջ, Հայաստանի կոտորածներով, նա կարող եղաւ գործնականապէս ջնջուած համարիլ Կիպրոսի դաշնագիրը և Եգիպտոսի գրաւումին առժամանակեայ պայմանը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ. ԱԶԳԱՅԻՆ „ՄՈՒՏ ԵՒ ՏԵՍ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Փրովիտէնս, 21 ապրիլ 1896.

Ներկայիս Փրովիտէնսի մէջ կազմուած է մի ազգային միութիւն „Մուտ և տես„ անունով: Երբ Հայ մը հետաքրքիր լինի այդ միութեան նպատակը իմանալ և հարցնէ անդամներէն, անոնք համառօտ և կտրուկ կերպով պատասխան կուտան թէ „մուտ և տես". առանց մտնելու ոչինչ չես կարող տեսնել: Բայց „Ապտակ"ի թղթակիցը, որ շարաչար կաշխատէր առանց մտնելու տեսնել, յաջողեցաւ ծանօթանալ իրենց Նպատակի հետևեալ կէտերին, որ առաջին տեղն են բռնած իրենց ծրագրի մէջ.

Ա. ՆՊԱՏԱԿ.

Տեսնելով որ Փրովիտէնսի Հայ հասարակութիւնը յաճախ կը վարակուի „դրամ" կոչուած հիւանդութենէն, ըստ որում այդ ապիրատախտը մտնելով ժողովրդի գրպաններն՝ խիստ նեղութիւն կը պատճառէ անոնց, միութեանս Նպատակն է ամէն միջոց ի գործ դնել, ժողովուրդը ազատելու համար այդ „դրամ"ի ճանկերից:

Բ. ՄԻՋՈՑՆԵՐ.

1) Կազմել հրապարակային ժողովներ, այնտեղ հրաւիրել „դրամ" հիւանդութեամբ վարակուած ժողովուրդը. կարդալ թալիսմանական քարոզներ որոնք կը նպաստեն այդ „դրամ"ի անհետանալուն:

2) Յօրինել շինծու նամակներ՝ իբր ստացուած Ցաճկահայաստանի յեղափոխական յանձնախմբերէն, որով անոնք հրաւէր կը կարդան անմիջական նիւթական օգնութիւն հասցունել Հայաստանի ապստամբ վայրերին. այդ ևս կը նպաստէ այդ անիծուած „դրամ"ի անհետանալուն ժողովրդի գրպանէն:

ՀԱՅՆԵՐ ԳԵՏՆԻՑ. — ԴԵՌ ՀԵՆՔ ՄԵՌԱԾ ԵՒ ՀԸ ՊԻՏԻ ՄԵՌՆԻՆՔ....

Յ. Գ. — Ուրախութեամբ կը հաղորդենք որ վերոյիշեալ միութիւնը իւր ծրագրի գործադրութեան առաջին փորձը պսակեց կատարեալ յաջողութեամբ: Զէյթունի ապստամբութեան ժամանակ, իբր թէ յեղափոխական յանձնախումբ մը „Գաղտնի Քաղաքէն“ նամակ մը ղրկած կը լինի այդ միութեան թէ՝ „մենք այստեղէն ահագին բանակներ և ռազմամթերք կուղարկենք Զէյթուն. իսկ դուք ի՞նչ կանէք. շուտով դրամ ուղարկեցէք, դրամ“: Այդ գերբնական զօրութիւն ունեցող նամակը, միութեան անդամներու անձնուէր աշխատութեան շնորհիւ կարող եղաւ բժշկել բազմաթիւ հայեր, հանելով անոնց գրպաններէն երեք հարիւր կտորի չափ „դրամ“ կոչուած միքրոպներ: Ցոյս ունինք որ միութեան մեղուաջան անդամները այս առաջին փորձի յաջողութենէն քաջալերուած՝ աւելի եռանդով առաջ պիտի տանին իրենց դրամախտաբուժական ս. գործը:

ԱՆՄՈՒՏ ՏԵՍՆՈՂԸ.

ՍՈՒԼԹԱՆԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.
ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏ.

Սուլթանը, որ սովորաբար վրան զէնք կը կրէ, Պարսից Շահին սպանութեան լուրը առնելէն ի վեր՝ ալ բոլորովին ռէվոլվէրը ձեռքէ չթողուր, անակնկալ յարձակումներու դէմ պատրաստ գտնուելու համար:

Ընցած գիշեր Ն. Վեհափառութիւնը՝ նոյն զգուշութեամբ իր շքեղ առանձնասենեակը մըտած ատեն, յանկարծ դիմացէն մէկը կը տեսնէ որ, մէկ ձեռքը գրպանը դրած, կասկածելի շարժումով դէպ ի իրեն կուգար: Արիասիրտ վեհապետը իսկոյն ռէվոլվէրը կը հանէ. բայց կասկածելի մարդն ալ նոյնքան արագութեամբ կը հանէ իր զէնքը և կուղղէ դէպ ի սուլթանին կուրծքը. որոյ վրայ սուլթանը կայծակի արագութեամբ կը փութայ կրակել թշնամիին ուղղակի սրտին. բայց միևնոյն վայրկենին կը կրակուէր արդէն թշնամիին ռէվոլվէրն ալ... և մինչ սուլթանը գետին կիյնար կիսաշունչ, —շո՛ւտ, շառաչմամբ կիյնար սենեկին մեծ հայելին:

Կրնաք երևակայել թէ ինչ էր պատահած.

Կորիճ սուլթանը իր պատկերէն խաբուած էր...

Ա՛լ երևակայեցէք պալատին մէջ տեղի ունեցած իրարանցումը: Մեծ դժուարութեամբ համարձակեցան բացատրել սուլթանին թէ ով էր երևակայական թշնամին, որուն դէմ սակայն կռուած էր աննման քաջութեամբ մը՝ որուն պիտի նախանձէին իր փառապանծ նախորդները:

Այդ չարաշուք օրէն ի վեր սուլթանը իր սենեակներէն դուրս հանել տուած է բոլոր հայելիները... այդ անիծեա՛լ հայելիները:

Յ. Գ.—Վերոյիշեալ դէպքէն երեք օր վերջը, տպագրական տեսչութիւնը բարձրագոյն հրամանով խստիւ արգիլեց բոլոր հայ թերթերուն՝ հայելի բառին գործածութիւնը:

Լաւատեղեակ շրջանակներուն մէջ կը կարծուի թէ, այս արգելքին մէկ պատճառն ալ այն է որ՝ "հայելի բառը հայ, ելի (էրմէնի, այաղա՛ գա՛լգ)„ նշանակութեամբ ալ կրնայ գործածուիլ:

ԽԱՅԹՈՅ.

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ.

Հրց. — Արմենիան, մեր հայրենիքը, ի՞նչ կուզէ:

Պտս. — Ազատութիւն:

Հրց. — Իսկ թղթէ „Արմենիա“ն ի՞նչ կուզէ

Պտս. — Ողորմութիւն:

ՆԱԽՈՐԴ ՐԷՊՈՒՍԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

Մ-սի-փոխ-Անակ-Սուլթան-ը-իւր-բանակին-կարագ-իւղակ-սաւ-բաժանէ-լ — Մսի փոխանակ Սուլթանը իւր բանակին կարագ իւղ ոկսաւ բաժանել: *)

ՐԷՊՈՒՍ ԹԻՒ 2



(* Ծանօթութիւն. — Ռէպուսների մէջ ուղղագրութիւն չընկայ:

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՏԱՐԵԴԱՐՁԸ.

Մի գիշեր, ուշ ժամանակ, երբ երկիր իջնելով, ես խուզարկում էի „քնած“ մարդկութեան բնակարանները, մի տան մէջ ես նկատեցի լոյս և ականջիս հասան խօսակցութեան ձայներ: Մօտեցայ և ճանաչեցի: Այդ տխրահռչակ „դաշնակցութեան“ ապակենտրոնացած կենտրոնի սագերն էին: „Ծրագրի“ շուրջ բոլորած, Նրա տարեդարձն էին կատարում: Ցաւակցութեան ճառեր խօսւեցին, որ այդպիսի մի տօնախմբութեան ներկայ չեն „դաշնակցութեան“ երկու հայրերը, — Ներսէս պատրիարք և Փորթուգալեան: Հանդէսը վերջացաւ հետևեալ գիտնական փոխասացութեամբ:

1 Սագ. Թէև մեր ծրագրի մէջ ո՛չ սոցիալիստ, ոչ կապիտալ, ոչ դասակարգային կռիւ բառերը կան, թէև այնտեղ չըկայ և ոչ մի ֆորմուլիոպէս, բան թէև մենք չենք ընդունում Հայաստանի մէջ ոչ կապիտալ և ոչ պրոլէտարիա, բայց մենք գիտական սոցիալիստներ ենք:

2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, և 11. Սագեր. Ի՜նչ, մենք գիտական սոցիալիզմ չենք ընդունում:

2 Սագ. Մենք Մարքսիստներ ենք:

3 Սագ. ոչ, մենք գիտական սոցիալիստներ ենք:

4 Սագ. Չէ՜, պարոններ. գիտական սոցիալիզմը շրջանակի մէջ է դնում մարդու ուղեղը: Մենք ենք — սոցիալիստ en général (ազատ երազող):

1 Սագ. Հաւատացէք, պարոններ, որ մենք գիտական սոցիալիստներ ենք: Գիտական սոցիալիզմի հիմքերը, պարոններ. 4 են. (մահացու մեղքերը 7 են...) պատմութեան մատերիալիստական հասկացողութիւն, կապիտալիզմի կենտրոնացում, յաւելեալ արժէք և դասակարգային կռիւ — որոնք մենք ընդունում ենք: Բայց որովհետև Հայաստանում ոչինչ չկայ, և դեռ պէտք է պաս պահելը վերացնել, մենք ուտոպիստներ ենք:

4 Սագ. Այո՛, պարոններ. մենք գիտական սոցիալիստներ ենք, թէև կապիտալիզմի կենտրոնացումը դեռ վիճելի է:

5 Սագ. Մենք ո՛չ Մարքսիստ ենք և ոչ սոցիալիստ:

6 Սագ. Մենք նարոդովոլցի ենք:

7 Սագ. Սո՛ւս կացէք, ինչ էք աւելորդ խօսում:

8 Սագ. (դիմելով 4-ին) Ա՞ենք ի՞նչ ենք:

9 Սագ, (դիմելով 4-ին) Թո՛ղ կը տա՞ք խօսելու. մենք սոցիալիստ ենք, որովհետև "ծրագրի„ մէջ գրուած է "համայնական„ և թէ "դաշնակցութիւնը կը հրատարակի սոցիալիստական գրքեր„:

17 Սագ. Ես դաշնակցական եմ:

18 Սագ. Ես դրօշակեան եմ.

11 Սագ. Դու ի՞նչ ես.

12 Սագ. Չեմ ասում.

11 Սագ. Բայց մի բան պէտք է լինել:

12 Սագ. Այդ անհրաժեշտ չէ դաշնակցութեան մէջ մտնելու համար: Գլան ղ ա յ ֆ ա է ի ն ի՞նչ էր, որ հնչակից եկաւ դրօշակի տակ մտաւ:

7 Սագ. Ինձ լսեցէ՛ք: Մենք ապագայի համար ոչ մի շրջանակներ չենք դնում. մենք ներկայ կեանքն ենք ուսումնասիրում: Ինչ որ ապագայում կը լինի, այն էլ մենք կը լինենք: Ինչո՞ւ այժմեանից ուղղութիւն ունենալ (որ դըժուար բան է) որ զուր բաժանումների առիթ լինի: Այդ ուղղութիւն չունենալովն է, որ մենք կուսակիցներ ենք վաստակում ամեն տեսակի կենդանիներից: Յիշեցէք ղ ա յ ֆ ա է ի ն: Բայց պարոններ, մենք գիտական սոցիալիստներ ենք: Միայն սոցիալ-դեմոկրատներ չենք (այս բառը արտասանելիս դահլիճի մէջ տիրեց մի սարսափ և բոլոր դաշնակցութիւնը խաչակնքեց, „հրաժարիմք ի սատանայէ“ փսփսալով): Դաշնակցութեան բարոմետրը ցոյց է տալիս թէ մի տաք օր, Հայաստանը ազատուելու է տաճկի լըծից ճիշտ այն ժամին, երբ Եւրոպայում ոտք կը դնի սոցիալիզմը: Այնպէս որ մեր մէջ էլ մի՛անգամից կը մտնի սոցիալիզմը: Գոնէ մենք յոյս ունենք որ այդպէս կը լինի: Այն ժամանակ առանց պրոլէտարիայի մրցման Եւրոպայի ձեռքերով մենք շագանակները կրակից կը հանենք և կուտենք:

4 Սագ. Այդ չէ, սիրելի քոյրիկս, ես սոցիալ-դեմոկրատ եմ (կրկին խաչակնքում) օրինակ, Պարսկաստանի համար, որովհետև այնտեղ գիւղացին հող չունի, բայց չեմ — Հայաստանի համար, որովհետև այնտեղ գիւղացին հող ունի: Ուրեմն կապիտալիզմի չարիքներից մեզ կազատեն մեր համայնքներ:

7 Սագ. Այո, համայնքները, և մենք կաշխատենք պահպանել այդ համայնական կարգերը, իբրև պատնէշ կապիտալիզմի դէմ:

1, 2 և 4 Սագեր միասին. Մենք սոցիալ-դեմոկրատներ ենք Եւրոպայի և մասամբ Ռուսաստանի համար, կէս սոցիալ-դեմոկրատներ — կովկասի համար, երեք չորրորդ — Պարսկաստանի համար և 0 — Հայաստանի համար:

17 Սագ. Բայց, եղբայր, ոմանք ասում են թէ, եթէ Հայաստան Եւրոպայի նման չէ, եթէ այդտեղ սոցիալիզմը մի անգամից պիտի մտնի, հապա էլ ինչո՞ւ էք ընդունում դասակարգային կռիւ, կապիտալիզմի կռիւ ևն: Չէ՞ որ դրանք կան, քանի որ դեռ սոցիալիզմը իրագործուած չէ: Բայց մեր Հայաստանում դրանք չը պիտի լինեն, որովհետև սոցիալիզմը միանգամից է մտնելու: Ուրեմն ինչ միտք ունի Հայաստանի համար գիտական սոցիալիստ լինել, տպել, քարոզել, քանի որ հայ ժողովուրդը դասակարգային կռուի և կապիտալիզմի կենդրոնացման պտուղները չը ճաշակած, մի անգամից մտնելու է Աւետեաց երկիրը: Մենք էլ ուտոպիստ չէ՞նք, որովհետև դուք հնչակին ուտոպիստ էք անուանում, հիմնուած այն բանի վրայ թէ հնչակը բանւոր է ընդունում Հայաստանում:

Բազմաթիւ Սագեր. „Ծրագիրը“ կարդա՛:

18 Սագ. Եթէ դուք ընդունում էք դասակարգային կռիւ, այսպէս են ասում մեզ, ուրեմն սոցեալ-դեմոկրատներ էք դուք էլ:

Բոլոր Սագերը. Ի՞նչ ես յիմար բաներ խօսում:

4 Սագ. "Ծրագիրը„ կարդա՛. (17 Սագին) խօ չենք ասելու թէ մենք սոցիալիստ չենք. տակտիկայ է, հասկացէք:

1 Սագ. Մենք եւ հնչակը այժմ մէկ ենք՝ որովհետեւ երկուսս էլ գիտական սոցիալիստ ենք, բայց մենք այժմ հնչակեան չենք: Սակայն առաջ հնչակը նարոդովոլցի էր, որովհետեւ կարծում էր թէ համայնքների միջոցով Հայաստանը կարող կը լինի խուսափել կապիտալիզմի չարիքներից: Յետոյ նա դարձաւ գիտական սոցիալիստ, որովհետեւ ընդունեց որ միայն պրոլէտարիայի մրցումով կարելի է հասնել սոցիալիզմին: Իսկ մենք նարոդովոլցի չենք, որովհետեւ կարծում ենք թէ համայնքների միջոցով Հայաստանը կարող է խուսափել սոցիալիզմի չարիքներից: Մենք գիտական սոցիալիստ ենք, որովհետեւ չենք ընդունում թէ միայն պրոլէտարիայի մրցումով կարելի է հասնել սոցիալիզմի:

Սոֆիզմի և պեդանտիզմի այս գագաթնակետին հասնելուց յետոյ, 1 Սագը լաւ համարեց թևերը թափ տալ և "ղրաղ„ քաշել:

2 Սագ. Այո, գիտական սոցիալիստ չէ նշանակում սոցիալ-դեմոկրատ, այսինքն բանւորական մրցում ընդունող. բայց Հնչակը գիտական սոցիալիստ դարձաւ, որովհետև ընդունեց պրոլէտարիայի մրցումը:

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ.

Ամերիկայի Վաշինկթօն քաղաքին մէջ ի նպաստ Հայերու „Նիզակակցութիւն“ մը կազմուած է որուն նշանաբանն է. „Աստուած՝ Ալլահին դէմ, Քրիստոս՝ Մահմէտին դէմ, Աստուածաշունչը՝ Ղուրանին դէմ, Երկինքը՝ Դժոխքին դէմ“: „Ապտակ“ն ալ իր կողմէ խոնարհաբար կառաջարկէ այդ նշանաբանին վըրայ աւելցնել նաև հետևեալը. — խօսքը՝ գործին դէմ, գրիչը՝ սուրին դէմ. քամին՝ կրակին դէմ, երազը՝ իրականութեան դէմ, հանճարը՝ բանճարին դէմ. կամ (եթէ այս վերջինէն աւելի կախորժին Պրն. Պրն. Ամերիկացիները) բանճարը՝ հանճարին դէմ: Զ.

ԻՄԱՍՏՈՒՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԸ.

Ապստամբ Կրետացիները պաշարեր են զօրանոց մը. մէջը գտնուող 1,300 Թուրք զինուորները շատ նեղ դրութեան մէջ են ինկած:

Սուլթանը երբ այս կիմանայ, բոլորովին կը կատղի:

— Երէկ անգամ Զէյթունցիներն էին զօրանոց պաշարողները, այսօր Կրէտացիները անոնց օրինակին կը հետևին. քանի որ զօրանոցները այսպէս իմ հպատակներուս փորձութեան առիթ կը դառնան, կը հրամայեմ քակել բոլոր զօրանոցները, և այսուհետև զօրքերը բնակեցնել ախոռներու և ...... վարժարաններու մէջ:

ՍՈՒԼԹԱՆԻ ՄԷԿ ԻՐԱՏԷՆ.

“Նկատելով որ, չարագործները, մարդասպանները և ուրիշ ամէն կարգի ոճրագործները աւելի շատ են կայսերական երկիրներուս մէջ քան թէ անմեղ և բարի քաղաքացիները, կը հրամայեմ որ, այսուհետև բոլոր չարագործներն ազատ թողուին կայսրութեանս լայնածաւալ սահմաններուն մէջ. իսկ բոլոր անմեղ և պարկեշտ քաղաքացիները բանտերու մէջ զետեղուին ու պաշտպանուին„:

Այս իրատէն բաւական խղճմտութեամբ կը գործադրուի վեց-եօթը տարիէ ի վեր:

Կեանքի ապահովագրութեան ընկերութիւն մը եթէ Թուրքիոյ մէջ ապահովագրէր մարդասպաններուն և բարի քաղաքացիներուն կեանքերը, անտարակոյս, առաջիններէն աւելի քիչ վարձք պիտի պահանջէր քան թէ վերջիններէն. վասն զի վերջիններուն կեանքն աւելի վտանգի ենթակայ է քան թէ առաջիններունը:

Բարեբաղդաբար կամ դժբաղդաբար, նոյն բանը կրնայ ըսուիլ նաև յեղափոխականներուն և խաղաղասէրներուն նկատմամբ. վասն զի այս վերջիններն ալ աւելի կը վտանգուին քան թէ յեղափոխականները:

61-Դ ՅՕԴՈՒԱԾԸ.

Պեռլինի դաշնագրի 61-դ յօդուածի իմաստը մթին ըլլալով՝ սկիզբէն ի վեր մեծ վիճաբանութիւններու նիւթ եղած է դիւանագիտական շրջաններու մէջ:

Վերջերս, հայկական խնդրոյ առած սուր կերպարանքը դիւանագէտներն ստիպեց վերստին զբաղել այդ կնճռոտ յօդուածին մեկնութեամբ: Երկար վէճերէ վերջ՝ անկարելի եղաւ միօրինակ մեկնութիւն տալ.

Եւրոպացի դիւանագէտներու փոքրամասնութիւնը և Հայոց Պատրիարքարանը այդ յօդուածը կը հասկընան հետևեալ կերպով.

„Բ. Դուռը յանձնառու կը լինի ոչ-իսլամներուն (քրիստոնեաներուն) կեանքն ու գոյքը պաշտպանել ոչ-քրիստոնեաներուն (մահմեդականներուն) յարձակումներէն եւ աւարառութիւններէն:“

Իսկ սուլթանը, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Լոպանովը, և նոյն ինք Սօլզպըրի մարքիզը, որ մին է յօդուածի խմբագրողներէն, կը պնդեն թէ յիշեալ յօդուածը հետևեալ կերպով պէտք է հասկընալ.

„Բ. Դուռը յանձնառու կը լինի ոչ իսլամներուն կեանքն ու գոյքը պաշտպանել ոչ քրիստոնեաներուն ..... յարձակումներէն եւ աւարառութիւններէն:“

Այս վերջին ըմբռնումով, սուլթանը կը պնդէ թէ 18 տարիէ ի վեր ճշդիւ գործադրած է դաշնագրի այդ յօդուածին պայմանները, և սակայն, տեսնելով որ Հայերը դժգոհ են, վերջին տարիներս սկսած է իրենց նկատմամբ աւելի ճշդապահութեամբ յարգել իր յանձնառութիւնները՝ զանոնք բոլորովին չպաշտպանելով յարձակումներէն, աւարառութիւններէն և մինչև իսկ կոտորածներէն:

ԽԱՅԹՈՑ.

?

„Թուրքիէթ“ հետեւեալը կը գրէ.

Սուլթանը՝ իր զօրքերուն նկատմամբ ունեցած համակրութիւնը ցոյց տալու համար՝ իր Ապտիւլրահիմ անուն որդին զինուորական կարգի մէջ մտցուց պարզ զինուորի աստիճանով. բայց արդեօք յիշեալ արքայորդիի ամսաթոշակներու վճարումն ալ, միւս զինուորներու նման՝ վեց ամիս պիտի յետաձգուի՞:

„Ապտակ“ ալ կը հարցնէ իր կողմէ.

Արդեօք երբ յիշեալ արքայազունը տասնապետութեան աստիճանին պիտի բարձրանայ...... իր հօր նման:

Ա.Զ.Դ

„ԱՊՏԱԿ“-ի ներկայ ամսվայ Թ. 1 համարով ըսկսում է նրա հրատարակման երրորդ տարեշրջանը: Մեր այն բաժանորդները, որոնք ցանկանում են նորոգել իրանց բաժանորդավճարը՝ „ԱՊՏԱԿ“-ի երրորդ տարեշրջանի համար, հրաւիրվում են անյապաղ անել այդ:

ԼՈՆԴՈՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.

---

9 Սեպ. Եւ ինչո՞ւ, պարոններ, սահմանափակել սօցիալիզմը, մենք լայն մարդիկ ենք և ոչ նեղ գիտական սօցիալիստներ: Սօցիալիստ ենք էլի. հաւասարութիւն լինի, համերաշխութիւն լինի, ռամկավարութիւն էլի...

15 Սեպ. Սօսիալիզմ մը, արդէն ընկերվարական բան մըն է, սանկ սկզբունք մը, ադ ո՞վ կը հերքէ. մենք ալ կընդունինք: Ինչո՞ւ չըլլայ եղեր համերաշխութիւն մը, հաւասարութիւն մը, քանի որ օգտակար բաներ են. քիչ մը մասնաւոր, քիչ մ' ալ ընդհանուր. ասանկ ալ կըլլայ, անանկ ալ: Սակայն այս սօսիալիստ տեմօքրաթներուն ուզածնին ի՞նչ է, պէ. կըսեն թէ կիներն ալ ամենուն սեփականութիւն պիտի ըլլան եղեր. ադ չըլլալու բան մըն է. ինչո՞ւ ատիկ սահմանափակենք սօսիալ-տեմօքրաթով մը: Հիմակ ալ Մարքսն ալ կը հերքեն կոր: Քաբիթալի կեթրօնացում մը կայ եղեր, սուտ է. ատիկ Հնչակին մէջն է: Դաշնակցութիւնը ամէն բանի մէջ ալ ապակեթրօնացում մը կընդունի: Քաբիթալն ալ, մեր ծրագրին համեմատ, պիտի ապակեթրօնանայ: Գաւառը հարուստ հայ մը կը ճանչնայի. 20 տարի ետքը 4 որդիքն ալ բաժանեցին ժառանգութիւննին և հարստացան և 1-ին տեղը 5 դրամատէր եղաւ — պարզապէս ապակեթրօնացում մը չէ՞: Թասակարքային կռիւ մը կայ եղեր-ո՞վ տեսեր է ատիկ. Հայաստան ամէնքն ալ հաշտ ու սիրով կապրին. շատ մը վէճեր գիւղին տէրտէրը հաշտութեամբ կը լմընցունէ: Յաւելեալ արժէք մը, փնական փան մըն է, արժէք չունենայ նէ ո՞վ ստակ կուտայ եղեր ու շուկայէն կառնէ ադ: Կըսեն թէ Հայաստան բանւոր կայ, եւրոպական ապրանք կը մտնէ եղեր — սուտ են բոլորն ալ: Հայաստանին մէջ խաղաղութիւն կը տիրէ, Շատ գաւառներ շաքար ըսածդ չեն գործածեր: Երբեմն անուշեղէն կուտեն, սանկ, մասնաւոր մը: Հայաստանցու զգեստը արդէն իւր պատրաստածն է. գտակ կը կրէ, որ նոյնպէս բուրդ մըն է և ատանկ կը պտըտին: Եթէ Հայաստանի դռները քոցուին նէ, հայ ժողովուրդը կրնայ գոհ ու երջանիկ ապրիլ. վասն զի իւր արտադրութիւնք բաղում են և շահաւէտ, օրհնեալ երկիր մըն է: Ի՞նչ խելք է որ ատանկ երկիր մը կուզեն մտնել սօսիալիզմի մը, Թասակարգային կռւի մը. ամենէն քիչը ատիկ դաւաճանութիւն է և ճշմարիտ ազգասիրի մը չի վայլեր բնաւին:

Դահլիճը դղրդաց բուռն ծափահարութիւններով և նիստը փակեց:

Երկար քրքջալուց յետոյ (վաղուց է այդպէս չէի ծիծաղել) ես պատրաստւում էի ներս մտնել և ասել մեր սագերին թէ ձեր ուղեղների մէջ բաբելոնեան խառնակութիւն է տիրում, և թէ „ինչպէս էլ որ դուք նստէք, բնաւ երաժիշտ լինելու չէք“, և թէ ինչպէս այդ բազմատեսակ գլուխները ածել էք „դաշնակցութիւն“ կոչւած տոպրակի մէջ: Բայց ահա վեր կացաւ սագերից պառաւագոյնը, կարծրացած ոսկորներով և հանդիսաւոր կերպով կարդաց „դաշնակցութեան ծրագիրը„:

Այդտեղ ես լռեցի: Այդ ծրագիրը լսելիս, իմ առաջ պատկերացան 60-ական թւականներից սկսած մեր բոլոր „ազգային“ գործիչներն ու “խմբագիրները„, որոնք հրճուանքով կստորագրէին նրա տակ: Եւրոպական սօցիալիզմի կիսաձայները ընկնելով տիրացուների ուղեղների մէջ, մի տեղ դարձել էր սաղմոս, միւս տեղը շարական և երրորդ տեղը փոխասացութիւն: Այդտեղ ամէն բան կար, բացի սօցիալիզմից և կարող էիք ուզածներդ էլ աւելացնել, առանց մի բան փոխած լինելու: Եւ ինչպէս Աստուածաշունչի մէջ է ասւած, սօցիալիզմի ստուերը շրջում էր այդ „անպատրաստ“ քաօսի վրայ: Միանգամայն իրաւունք տալով մեր սագերին, ես ողջողութիւն մաղթեցի „ծրագիր„ անունով այդ լայնածաւալ վերարկուն կրող քաջամարտիկ տիրացուներին:

Առախօսութիւններից յետոյ ուղարկեցին հեռագիրներ.

1) Փորթուգալեանին. — Մեկնում ենք մեր ձեռքը ձեզ. երկար գլուխ չունենք սօցիալիզմի վերաբերմամբ. այդ միայն երբեմն մեր միտքն է ընկնում: Գործենք հայրենի ուղղութեամբ. ապագան մերն է: Արմենիա-դաշնակցական խառնակութիւն:

2) Հնչակին. — Սո՛ւտ է, դու չես սօցիալիստ. այլ մե՛նք ենք: Գիտական-սօցիալիստ դաշնակցութիւն:

3) Բէբէլին և Լիբկնեխտին. — Ուրիշ բան է գիտական սօցիալիզմ և ուրիշ բան է սօցիալ-դեմօկրատ. կայ մարքսիզմ թէօրիտիք և մարքսիզմ պրատիք. դուք խառնում էք: Սօցիալ դեմօկրատներ Եւրոպայի, Ռուսաստանի և Պարսկաստանի:

4) Մարքսին և Էնգէլսին. — Կապիտալիզմի կենդրոնացումը վիճելի է, ինչպէս և մեր խմբերի ապակենդրոնացումը. թւեր ունինք. ցնոր գիւտ: Մարքսիստներ:

5) Դաշնակցութեան բիւրօյին. — Ծրագիրը յարմարագոյն է, բաւականացնում ենք ամէնքին. միանում ենք մեծ չափով արմէնիստները և չէզոքները և նրանք, որոնք „թագաւոր“ չեն ուզում Հայաստանի մէջ, օրինակ Ղայփաչին: Դէ, ի միջի այլոց ներկայ դարում չէ կարելի սօցիալիստ չանւանել. ադէտ կասեն. եօլա ենք տանում: Խնդրում ենք անհատական ապակենտրոնացում, որովհետև Հայաստանում գործերը քիչացել են. Ժողովուրդը պատրաստ է լուռ բողոքելու. Միջազգային տիրացուներ:

Ամենից յետոյ վճռւեց մի թռուցիկ հրատարակել, ուր տպւած պիտի լինի յատկապէս „դաշնակցութեան“ տիտղոսները որ պահանջում են նրա զանազան անդամները, այս կերպ.

“Մենք, հայ յեղափոխական դաշնակցութիւն, դրօշակեաններ, մարքսիստներ, գիտական սօցիալիստներ, Եւրոպայի, Ռուսաստանի և Պարսկաստանի մէկ, կէս և երեք չորրորդ սօցիալ-դեմօկրատներ, Հայաստանի հայրենի յեղափոխականներ, ազատ երազողներ, ուտօպիստներ, սօցիալիստներ en général, չէզոքներ, լայն յեղափոխականներ և այլն, այլն:

„Տէր կեցո“ ով, դաշնակցութիւնը փնաց քնելու:

Միւս գիշերը ես կանգնած էի հեռագրատանը: Օրապահը արձանագրում էր հետևեալ հեռագիրը, որը փոքր յետոյ պիտի հասնէր մեր յեղափոխականներին:

„Ապակենտրոնացած կեդրոնին. — Կարդացինք տարեդարձի հաշիւը և ձեր հեռագիրը: Դուք այդտեղ նստած մի քիչ աւելի էք ոգեւորւում սօցիալիստական հոսանքով: Մի մոռանաք որ մենք հայրենի ուղղութիւն ունինք. աշխատեցէք հետևել 15 սագի խորիմաստ պրօգրամին: Դաշնակցութեան բիւրօ:“

Փէհլիւանները դուք չէք. դուք եալանչիներ էք:

Démon.